Հ ա շ վ ե տ վ ու թ յ ու ն
Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի 2011 թվականի աշխատանքային գործունեության վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունվարի 13-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» թիվ 111-Ն որոշմամբ հաստատված ծրագրային միջոցառումներն իրականացվել են սահմանված ժամկետում:

Նախարարությունն ապահովել է նաև ՀՀ կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 8-ի «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2009-2012 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1272-Ն որոշմամբ, ՀՀ Նախագահի 2009 թվականի մայիսի 6-ի «Եվրոպական հարևանության քաղաքականության ՀՀ - Եվրոպական միություն գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2009-2011 թվականների միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ ՆԿ-68-Ա կարգադրությամբ, ՀՀ Նախագահի 2009 թվականի ապրիլի 21-ի «Դատահիրավական բարեփոխումների 2009-2011 թվականների ռազմավարական գործողությունների ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու, ինչպես նաև աշխատանքային խումբ ստեղծելու մասին» թիվ ՆԿ 59-Ն կարգադրությամբ նախատեսված միջոցառումների իրականացումը, ինչպես նաև նշված ծրագերով իրականացվելիք միջոցառումների արդյունքում մշակված իրավական ակտերի վերաբերյալ տրվել են փորձագիտական եզրակացություններ:

2011 թվականի ընթացքում Նախարարությունում բարեփոխումներն իրականացվել են 2 ուղղություններով՝ կառուցվածքային և բովանդակային:

Կառուցվածքային բարեփոխումներ – նախարարության աշխատակազմի կառուցվածքում վերակազմավորման միջոցով վերակազմակերպվել են՝

1. Օրինականության վերահսկողության տեսչությունը
2. Դատական հանձնարարությունների կատարման բաժինը
3. Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում՝ փաստաթղթերի ընդունման և սպասարկման, ինչպես նաև գրանցման աշխատանքների կազմակերպման բաժինները:

Բովանդակային բարեփոխումներ -

Նախարարի հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ, որի նպատակն է ուսումնասիրել ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները և ՀՀ կառավարությանը ներկայացնել առաջարկույթուններ անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ:

Իրականացվել է 1990-1995 թվականներին ընդունված իրավական ակտերի գույքագրում, որը վերլուծվել և օրենսդրական փոփոխություններ կատարելու առաջարկով ներկայացվել է ՀՀ պետական մարմիններին:

Մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն են ներկայացվել հետևյալ նախագծերը.

- ՀՀ ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին,
- ՀՀ քրեակատարողական օրենսգրքում և «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին,
- Դատական ակտերի հարկադիր կատարման մասին և Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին ՀՀ օրենքներում փոփոխություններ կատարելու մասին,
- Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին,
- Փաստաբանության մասին ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին,

  և այլ օրենքների նախագծեր:

Նոտարիատի բնագավառի բարեփոխումներ –

1. նոտարի պաշտոնում նշանակելու նոր չափանիշերի սահմանում,
2. նոտարի թեկնածուների վերապատրաստման նոր կարգերի ընդունում,
3. նոտարական ծառայությունների համար ֆիքսված սակագների սահմանում և հստակեցում,
4. նոտարական վավերացում չպահանջող պայմանագրերի օրինակելի ձևերի հաստատում,
5. նոտարի կողմից իրականացվող գործարքների ժամանակ ծառայության վճարի և պետական տուրքի անկանխիկ և կանխիկ վճարների ընդունման հնարավորությունների ստեղծում ՀԴՄ-ների միջոցով.
6. նոտարների նկատմամբ վերահսկողության ուժեղացում:

«Մեկ պատուհան» սկզբունքի ներդրում

1. իրավաբանական անձի գրանցումը կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառումը կատարվում է «Մեկ պատուհանից», միաժամանակ հնարավորություն է տրվել պետական գրանցումն իրականացնել էլեկտրոնային եղենակով /e-registr.am/, որի տևողությունը 7-8 օրից հասցվել մինչև 15 րոպեի.
2. «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի փոփոխությունների և մի շարք այլ իրավական ակտերի ընդունում, որով հաստատվել է իրավաբանական անձանց միասնական գրանցամատյանից տեղեկանքներ ստանալու ձևերը,
3. ընդունվել է իրավաբանական անձանց պետական գրանցման մասին ձեռնարկը, որով մեկնաբանվել և պարզաբանվել է իրավաբանական անձի գրանցման գործընթացը.
4. գրանցման գործընթացի ժամանակ իրավունքների իրականացման համար ոչ պարտադիր գործողությունների համար արտաբյուջետային վճարների համակարգի ներդրում,
5. «Ինտերնետով հրապարակային ծանուցման մասին» ՀՀ օրենքով նախատեսված ինտերնետային կայքի գործարկում՝ պաշտոնական հրապարակումների նպատակով azdarar.am կայքի սպասարկում:

Մատչելիության սկզբունքի գործնական հիմքերի բարելավում

2011 թվականին շահագործման է դրվել «Դատալեքս» տեղեկատվական համակարգի ինտերնետային կայքը /www.datalex.am/, ինչը հանդիսացավ լուրջ տեղեկատվական բազա դատական համակարգում առաջացող խնդիրների լուծման համար: Մասնավորապես, «Դատալեքս» համակարգը հնարավորություն ընձեռեց առցանց /online/ որոնել դատական գործեր, տեղեկանալ նիստերի ժամանակացույցին, որոնել որոշակի կոնկրետ գործի համար նմանատիպ համարվող գործեր, ՀՀ օրենքներ, առցանց ուղարկել դիմումներ և կատարել վճարումներ:

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման բնագավառում բարեփոխումներ

1. կրճատվել է ամուսնությունների գրանցման ժամկետները և պահանջվող փաստաթղթերի քանակը («ՔԿԱԳ մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ),

2. տարածքային մարմինների կողմից իրականացված գրանցումների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման նպատակով առցանց համակարգի ներդրում:

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի աշխատանքային ծրագրի 1-ին կիսամյակի կատարողականի գնահատականը կազմել է 94,11 միավոր, իսկ 2-րդ կիսամյակինը՝ 95,8 միավոր: